



ՄԱԿ-ի օրացույցում երեխաների պաշտպանությանը նվիրված առնվազն 2 օր կա՝ հունիսի 1-ին նշվող երեխաների պաշտպանության միջազգային օրը և նոյեմբերի 20-ը՝ երեխաների համաշխարհային օրը: Ի դեպ, հենց այդ օրն է ընդունվել 1959-ին «Երեխայի իրավունքների հռչակագիրը», իսկ 1989-ին՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան:

ՅՈՒՆԻՍԵՖ-ն է ահազանգում



- Ամեն օր 16.000 երեխա է մահանում, հիմնականում այնպիսի պատճառներից, որոնք կարելի է կանխարգելել կամ էլ բուժել: - Գրանցված 35 միլիոն ՄԱԿ վարակահիւրներից 2 միլիոնը 10-19 տարեկան են, և նրանց 56%-ը աղքիկ է: - Ամբողջ աշխարհում 20-24 տարեկան կանանց մեկ երրորդը մանուկ հարսներ են: - Յուրաքանչյուր 10 րոպե մեկ աշխարհի որևէ հատվածում դեռահաս աղքիկ է մահանում բռնության հետևանքով:

16 միլիոն երեխա ծնվել է հակամարտության գոտիներում



2015-ին ավելի քան 16 մլն երեխա ծնվել է հակամարտության գոտիներում: Սա մշտնապես է, որ յուրաքանչյուր 8-րդ երեխա աշխարհ է եկել փամփուշտների և թնդանոթների սուղի տակ:

«Յուրաքանչյուր 2 վայրկյանը մեկ մի նորածին երեխա իր առաջին շունչն է առնում հակամարտության կիզակետում առանց որևէ բժշկական օգնության»,- հայտարարել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Էնթոնի Լեյթը՝ ներկայացնելով ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ երեխաների վերաբերյալ նոր գեկույցը:

Նա ընդգծել է, որ այսօր շատ երեխաներ են սկսում իրենց կյանքը ծայրահեղ պայմաններում՝ հակամարտության և բնական աղետների գոտիներում, ծայրահեղ աղքատության, հիվանդությունների և թերսնուցման պայմաններում: «Ի՞նչը կարող է ավելի վատ լինել, քան կյանքի նմանատիպ մեկնարկը», - հռետորական հարց է տալիս ՅՈՒՆԻՍԵՖ-ի ղեկավարը:

Միայն այս տարվա առաջին 10 ամիսների ընթացքում ավելի քան 200 հազար երեխաներ են դիմել եվրամիության երկրներ՝ ապաստան հայցելով: Նրանք լրացրել են ամբողջ աշխարհի 30 մլն երեխաների բանակը, ովքեր լքել են իրենց տները 2014-ի վերջին պատերազմների, բռնության և հետապնդումների պատճառով:

Ախտաբանականությունը

Այս տարվա Activate Talks քննարկումներն անցան «Գիտելիք հանուն կյանքի» կարգախոսի ներքո



Անվճար հավելված www.WomenNet.am

2015 դեկտեմբեր

«Հրեշտակի աղոթքը» միավորում է բոլոր երեխաներին



Լուսանկարը՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի

Ամանորին ընդառաջ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակը և «Յուրքոմ» ընկերությունը մվեր մատուցեցին բոլոր երեխաներին՝ ներկայացնելով «Հրեշտակի աղոթքը» երգը: Պրեմիերան առանձնաճակ երգի կատարողներով, բեմում կողք կողքի էին երևանի քաղաքապետարանի Չայմի պահպանման վկայա ստուդիայի սաները և լսողության խնդիր ունեցող երեխաները՝ սուրդոթարգմանությամբ:

Երգի հեղինակ, կոմպոզիտոր Նարինե Ջարիֆյանը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում կայացած պրեմիերայի ժամանակ, կարևորելով այս նախաձեռնությունը, ասաց.

- Երբ երգը գրեցիք, հասկացա, որ ինչ-որ բան պակասում է, եթե երեխան ուղղում է իր խոսքը առ Աստված, ապա ինչու, օրինակ, լսողության խնդիր ունեցող երեխան չպետք է այս ամենի մասնակիցը դառնա: Ու այսպես ծնվեց

այս նախագծի գաղափարը, որը նաև լավագույն միջոցներից մեկն է հաշմանդամություն ունեցող երեխաներին ինտեգրելու հասարակություն:

Նա պատմում է, որ երբ նկարահանում էին տեսահոլովակը, մոտ 2-3 ժամ երեխաները միմյանց հետ չէին շփվում, անտեսանելի պատմեջ կար, միայն վերջում սկսեցին իրենց ազատ զգալ:

- Իսկ երբ առաջին անգամ տեսա, թե ինչպես են բեմի վրա երգում ժեստ-

րի լեզվով, շատ ազդվեցի. այնքան գեղեցիկ էր ու հուզիչ: Ուզում եմ, որ այս օրինակները մեզանում այնքան շատ լինեն, որ դառնան հասարակ, սովորական բան,- նշում է Նարինե Ջարիֆյանը: Մեզ հետ գրույցում իր ուրախությունը կիսեց Անին, ով մի շաբաթ այլ երեխաների հետ կատարել է «Հրեշտակի աղոթքը» երգը:

- Ես շատ էի ուզում, որ մի օր չլսող երեխաները հավասարի պես կանգնեն լսողության խնդիրներ չունեցող երեխաների կողքին, ու միասին երգեինք, մեզ հավասար զգայինք, այսօր իմ փոքրիկ երագանքը կատարվեց... Մեզ 18 տարեկան է, լսողության խնդիրներ ունի: Ինքնարտահայտման

իր ձևն է գտել. մնջախաղ, ժեստերի լեզվով զգացմունքների արտահայտում, նաև՝ երգը:

Անիի հետ երգը կատարում է 17-ամյա Գևորգը, ով նույնպես մնջախաղի բատրոն է հաճախում.

- Սկզբում ինձ թվում էր՝ մնջախաղը շատ հեշտ է, բայց հետո հասկացա, որ իրականում շատ բարդ բան է: Երբ խաղում եմ, ոնց որ երկու Գևորգ է լինում, մեկը՝ ես, մյուսը՝ այն կերպարը, որ մարմնավորում եմ:

Անիի ու Գևորգի համար իրավունքը ինքնարտահայտվելու հնարավորություն ունենալն է ու նաև իրենց սիրելի գործով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

«Ես երեխա եմ». իրավունքների մասին մասշտաբային ձևով

- Բարև, ես Արեգն եմ, ես չեմ տեսնում, բայց դա ինձ չի խանգարում սովորելու:
 - Բարև, ես Դավիթն եմ, ես շատ եմ սիրում ֆուտբոլ խաղալ:
 - Ես էլ Մանեն եմ, ես չեմ կարողանում քայլել, բայց դա ինձ չի խանգարում ճանապարհորդելու:
- Արեգը, Դավիթը, Մանեն «Ես երեխա եմ» գրքի հերոսներն են: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի հիման վրա մշակված գրքուկը մատչելի կերպով ներկայացնում է կոնվենցիայի հոդվածները: Գրքուկը պատրաստել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը՝ ԳՅ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և «Ելվա» արվեստների հիմնադրամի հետ համատեղ: Այն հաստատվել է ԳՅ կրթության և գիտության նախարարության կողմից որպես ուսումնասիրական նյութ:

Քսանհինգ տարի առաջ կոնվենցիան ընդունելով աշխարհը խոստացավ երեխաներին, որ ամեն ինչ կարվի, որ նրանց իրավունքները հարգվեն և պաշտպանվեն: Ընդունումից ի վեր աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, բավականին առաջընթաց է գրանցվել: Սակայն անելիքները դեռ շատ են: Հուսով եմ, որ այս գրքի միջոցով հասարակության բոլոր անդամները կարող են երկխոսություն սկսել, թե որոնք են երեխայի իրավունքների ոլորտի առաջնահերթությունները, ինչպիսի բաց կողմեր կան, և որոնք պետք է լինեն մեր հետագա անելիքները այս բնագավառում,- իր բացման խոսքում նշեց Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի տեղակալ Ռադոսլավ Ռժեհակը:

ԳՅ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդակցական Անուշ Մարգարյանն էլ նշում է, որ երեխաների իրավունքների ոլորտում խնդիրներ շատ կան՝ բռնության երևույթներ, խտրականություն:

- Երեխան ունի ընտանիքում ապրելու իրավունք: Պետության համար մեծ մարտահրավեր է. անցում կատարել երեխաների խնամքի հաստատություններից խնամատար ընտանիքների ինստիտուտ: Մի-

ջազգային փորձն ապացուցել է, որ երեխայի զարգացման համար դա լավագույն տարբերակն է, ասում է Անուշ Մարգարյանը՝ նշելով մեկ այլ կարևոր խնդիր մասին, այն է՝ երեխաների մասնակցությունը իրենց վերաբերող իրավունքների, ռազմավարության մշակմանը:

Մեր փոքրիկ հարցախոյզը երեխաների շրջանում ցույց տվեց, որ նրանցից շատ քչերը գիտեն՝ ի՞նչ է իրավունքը, ի՞նչ իրավունքներ ունեն: Հուսանք՝ գիրքը շուտով այդ բացը կլրացնի:

13-ամյա Դավիթի համար ամենակարևորը կրթության իրավունքն է.

- Մենք պետք է ունենանք սովորելու իրավունք, որ գիտելիքներ ստանանք, բուհ ընդունվենք ու հետո լավ աշխատանք գտնենք, իսկ եթե չունենանք այդ իրավունքը, դպրոց չգնանք, վատ կլինի,- անկեղծանում է Դավիթը:

15-ամյա Անի Ռուբենյանի համար էլ ամենակարևորը, որ.

- Մենք՝ երեխաներս, խաղաղ, նորմալ պայմաններում մեծանանք, որ տանը վեճեր չլինեն, բռնություն չլինի, որ հետո էլ մենք լավ ընտանիքներ ունենանք:



12-ամյա Լիլիթ Պետրոսյանն էլ ասում է, որ շատ հաճախ հենց երեխաներն են խախտում միմյանց իրավունքները. - Այ, օրինակ, եղել է դեպք, երբ աշակերտը վարժ չէր կարողանում խոսել, ու դրա պատճառով դասարանում նրան ծաղրում էին, չէին ընդունում: Միայն մեծանալով, պետք է մարդուն միշտ ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա,- համոզված է Լիլիթը:

Փաստաբար

Մանկական աղքատություն

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2015-ին հրապարակած տվյալների՝ Հայաստանում մինչև 18 տարեկան երեխաների 3,3%-ն ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 34%-ը՝ աղքատության մեջ, այն դեպքում, երբ ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության բնակչության, համապատասխանաբար, 2,3 և 30,0%-ը: Այսինքն՝ երեխաներն ավելի խոցելի են աղքատության ռիսկի նկատմամբ, քան բնակչությունն ամբողջությամբ վերցված: Բոլոր երեխաների 41,1%-ը ապրում է տնային տնտեսություններում, որի գլխավորը չի աշխատում:



Մինչև 18 տարեկան երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 45,8%-ը, իսկ մեծ ընտանիքներում ծայրահեղ աղքատ է երեխաների 5,3%-ը: Հաշվառվածություն ունեցող երեխաների 52,1%-ն աղքատ է:

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում երեխաների աղքատ լինելու հավանականությունը բարձր է՝ նրանցից 37,8%-ն աղքատ է, իսկ 4,6%-ը՝ ծայրահեղ աղքատ:

Մանկական աղքատության մակարդակն էլստեղծվում է ըստ մարզերի: Շիրակի մարզում ապրող երեխաների 49,6%-ը աղքատ է, 5,8%-ը՝ ծայրահեղ աղքատ: Արագածոտնում երեխաների աղքատության մակարդակն ամենացածրն է՝ 13,5%:

Աղքատ լինելու հավանականությունն էլստեղծվում է բարձր է այն երեխաների շրջանում, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնց գլխավորը կրթություն չունի կամ ունի տարրական կրթություն (50,2%), այն երեխաների համեմատությամբ, որոնց ծնողներն ունեն բարձրագույն կրթություն (15,3%):

Աղքատ երեխաները հաճախ բնակվում են կարևոր հարմարություններից զուրկ տներում՝ խոհանոց, հոսող ջուր, գազամատակարարում, կոյուղու համակարգ, լոգարան կամ ցնցուղ չունեցող կացարաններում: Աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների, համապատասխանաբար, 9,2 և 30,7%-ն ապրում է սառնարան չունեցող տնային տնտեսություններում: Անբավարար ջեռուցման խնդիր ունեցող տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 56%-ը և ծայրահեղ աղքատ երեխաների 75%-ը: Խոնավ տնային տնտեսություններում է բնակվում աղքատ երեխաների 43%-ը և ծայրահեղ աղքատ երեխաների 67%-ը՝ երեխաների ընդհանուր թվաքանակի շրջանում արձանագրված 34%-ի համեմատ: Բնակարանային հիմնախնդիրները կարող են բացասաբար ազդել երեխաների առողջության, անվտանգության, կրթության և սոցիալական զարգացման վրա:

ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն 2013 թվականի ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական գեկույան երեխաների ամփոփիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել, որ ընտանեկան նպաստի բանաձևի անբավարարության և գոյություն ունեցող պետական աջակցության վերաբերյալ տեղեկացվածության պակասի պատճառով ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54,3%-ը և աղքատ ընտանիքների 4,1%-ն են կանոնավոր կերպով օգտվում այդ փաթեթներից:

«Ամենամեծ խնդիրն աղքատությունն է»

«Աղքատությունն է տանում երեխաներին մանկատներ, աղքատությունն է խոցում նույնիսկ այդ հաստատություններում չգտնվող երեխաներին: Այն բազմակի ազդեցություն է թողնում, քանի որ զրկում է երեխաներին որակյալ կրթություն ստանալու, լավ բնակարանային պայմաններ ունենալու, անզան լավ սնուցում ստանալու իրավունքներից՝ հետք թողնելով նրանց ողջ կյանքի վրա: Եվ եթե մենք այսօր համապատասխան քայլեր չձեռնարկենք, ապա դեմ կառնենք այն խնդիրին, որ հաջորդ սերունդները ավելի մեծ աղքատության կառնենք», - ասաց Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Տանյա Ռադոչայը՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի վրա հիմնված գրքույկի շնորհահանգի ժամանակ կայացած մեզ հետ զրույցում:



Լուսանկար՝ ՀՀ արդարադատության նախարարության

Մեր խոսքով՝ շատ դեպքերում ո՛չ երեխաները, ո՛չ նրանց ծնողները, ո՛չ էլ ուսուցիչները չգիտեն՝ ի՞նչ ասել է երեխաների իրավունք, որո՞նք են այդ իրավունքները: Այնինչ իրավունքի գիտակցումով է պայմանավորված այն, որ աշխարհը կոփոխվի երեխաների համար:

Ներկայացնելով հատուկ երեխաների համար պատրաստված ձեռնարկի նոր տարբերակը՝ նպատակ ունենք նաև բարձրագույնում մի շարք մտահոգություններ, որոնք հանրային կայն քննարկման չեն ենթարկվում, դրանցից է բռնությունը երեխաների նկատմամբ: Այն առկա է բոլոր հասարակություններում, մեծերը հաճախ են կիրառում «կոշտ դիսցիպլին»՝ համարելով դա նորմալ վերաբերմունք երեխաների համար: Պատահում է՝ բռնի վարքագիծ է դրսևորվում նաև երեխաների կողմից իրենց հասակակիցների նկատմամբ: Վերջերս մենք նաև ակնառկա ենք լինում բռնության միանգամայն նոր տեսակի կիրառության, ինտերնետում, մենք անզան չգիտենք էլ, թե մեր երեխաներին ի՞նչ վտանգ է սպառնում և ինչպե՞ս օգնել նրանց:

Դրա հետ մեկտեղ Տանյա Ռադոչայը նշեց, որ Հայաստանը երեխաների իրավունքների ոլորտում որոշակի ձեռքբերումներ ունի, հատկապես հաջողություններ կան ներառական կրթության ոլորտում.

- Իհարկե, ամեն բան իդեալական չէ, բայց

մենք տեսնում ենք, որ կա հստակ պատկերացում և կանգ գնալ ներառական հասարակության ուղղությամբ: Մյուս հաջողությունը դպրոցների անվտանգության հարցերով լավատեղյակությունն է, ինչը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով Հայաստանի փորձը ավերիչ երկրաշարժի հետ կապված: Այս տարիներին շատ բան է արվել, որ երեխաներին սովորեցնեն՝ ինչպե՞ս գործել մնաց իրավիճակներում: Փոփոխություն ենք նկատում նաև խոշոր տիպի խնամքի հաստատությունների վերակազմակերպման, այլընտրանքային տիպի ընտանիքահենք ծառայությունների և մյուս կողմից՝ համակարգում դեպք վարողի՝ սոցիալական աշխատողի իմաստասեր ներդրման հարցում,- հավելեց Տանյա Ռադոչայը:

Մեր զրույցակիցը կարևորեց նաև, որ այս վերակազմավորման գործընթացում բացակայի շտապակազմակերպությունը, և կատարվող քայլերն իրականացվեն շատ զգուշավոր: «Բազմաթիվ ընտանիքներ կան, որ բարդ խնդիրներ ունեն, և մենք պետք է շատ զգույշ լինենք, երբ խոսում ենք երեխայի իրավունքների և նրանց պաշտպանության մասին: Մեր համատեղ աջակցությունը պետք է բխի միայն և միայն ընտանիքի ճիշտ գնահատված կարիքներից,- ասաց նա: Նշեց, որ ևս մեկ անդրադարձ երեխաների իրավունքներին Տանյա Ռադոչայը կատարեց օրերս կայացած Անչափահասների արդարադատության խորհրդի անդրահիկ միտում: Խորհուրդը ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից այս տարվա մայիսից իրականացվող «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում» Հայաստանում» ծրագրի շրջանակում, որի հիմնական աջակիցն ու գործընկերը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն է:

«Անզան եթե երեխան օրենքի դեմ է գործել, չպետք է մոռանալ, որ գործ ունենք երեխայի մտքը»

Տանյա Ռադոչայ ՅՈՒՆԵՍԿ-ի ներկայացուցիչ

Օրենքի ուժով Ի՞նչ է փոխվել Սահմանադրության մեջ երեխայի իրավունքների մասով

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով երեխայի իրավունքներին վերաբերող նոր հոդված է ավելացել:

- Հոդված 37. Երեխայի իրավունքները
1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:
2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:
3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:
4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության մեջ են:

Մեր խնդրանքով պարզաբանելով կատարված փոփոխության էությունը՝ Ազգային ժողովի ՀՀ խնդրանքային պատգամավոր Արծվիկ Մինասյանն ասում է, որ այս հոդվածը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության վրա չի ազդում համակարգ է ամրապնդում:

«Այս բոլոր նորմերն անշուշտ եղել են Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների և ստորագրած պայմանագրերի շրջանակում, ինչպիսին է, օրինակ՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ գործող օրենքը: Ամրագրելով Սահմանադրության մեջ, ավելի

են բարձրացնում պաշտպանվող արժեքները, և, որ ամենակարևորն է՝ երեխան դառնում է մարդու իրավունքների և ազատությունների ապահովման կարևոր սուբյեկտ», - ընդգծում է Մինասյանը:

Բացի այս, սահմանադրական նոր կարգավորումներով պետությունը պարտավորություն է ստանձնում երեխայի իրավունքների պաշտպանության մակարդակն անընդհատ բարձրացնելու ուղղությամբ և դրա վերաբերյալ հաշվետվություններ կայացնելու խորհրդարանին: Այս դրույթը պատգամավորն անչափ կարևորում է և նշում, որ դա ինքնին մեխանիզմ է, որը կապահովի Սահմանադրության մեջ նշված նորմերի ոչ միայն իրականացումը, այլ նաև առաջընթացը:

պանության մասին: Մեր համատեղ աջակցությունը պետք է բխի միայն և միայն ընտանիքի ճիշտ գնահատված կարիքներից,- ասաց նա: Նշեց, որ ևս մեկ անդրադարձ երեխաների իրավունքներին Տանյա Ռադոչայը կատարեց օրերս կայացած Անչափահասների արդարադատության խորհրդի անդրահիկ միտում: Խորհուրդը ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից այս տարվա մայիսից իրականացվող «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում» Հայաստանում» ծրագրի շրջանակում, որի հիմնական աջակիցն ու գործընկերը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն է:

«Անզան եթե երեխան օրենքի դեմ է գործել, չպետք է մոռանալ, որ գործ ունենք երեխայի հետ», - ասաց նա միտում ընթացքում իր ելույթում, նկատելով, որ հաճախ անընդհատ կրկնվող հարցաքննություններում երեխային տրված մայի են ենթարկում՝ փոխարենը պաշտպանեն և արդարություն ապահովեն նրա համար:

«Եվ խոսքն ամենակի էլ միայն բռնության գոհ դարձած երեխաների մասին չէ, յուրաքանչյուր երեխա կարող է հայտնվել զոհի, վկայի, զանցավորի կամ այլ կարգավիճակում: Հենց այդ պատճառով արդարադատությունը երեխաների համար պետք է լինի հասանելի և մատչելի», - ասաց նա, հավելելով, որ այս պարագայում բոլորի գլխավոր նպատակն է՝ օգնել երեխային կանգնելու ճիշտ ճանապարհի վրա:

Երեխաների ձայնը

«Պա՛պ, բա մենք շոր չե՞նք առնում...»

Արարատի մարզի Այգավան գյուղում ապրող բազմադուռ Մելքոնյանների բազմադուռ ընտանիքի երեխաները սեպտեմբերի 1-ը տան են անցկացրել: «Սեպտեմբերի 1-ին անհամբեր սպասում էինք, բայց վերջին օրն իմացանք, որ չենք գնում ու շատ տխրեցինք: Հեռուստացույցով ցույց էին տալիս, որ մարդիկ շոր էին առնում, մենք էլ հարցրինք՝ պա՛պ, բա մենք շոր չե՞նք առնում, ասե՛ք՝ փող չկա», - պատմել է Մարիամը News.am-ի թղթակցին: Դպրոցահասակ վեց զավակներից ամենաշատը, սակայն, դրանից տխրել է 6-ամյա Անայան. սա նրա առաջին սեպտեմբերի 1-ն էր: Քրոջը միփաբար էր 8-ամյա Սառան, որն այս հարցում արդեն մեկ տարվա փորձ ունի: «Անցած տարի էլ սեպտեմբերի 1-ին չեմ գնացել, երեկ ու այսօր էլ չեմ գնացել դպրոց: Շոր չունեմ, կոշիկ չունեմ, դրա համար չեմ գնացել, բայց շատ եմ ուզում», - ասել է նա:

«Միտում են դպրոցը, բայց...»

«Երբ պետք է ավագ դպրոց գնայի, որոշեցի չգնալ: Ծնողներս չէին հասցնում մեր նյութական խնդիրները հոգալ: Չորս երեխա ենք, թույլիկներս հազիվ ենք դպրոց ուղարկում: Դժվար է՝ շոր, կոշիկ, ամեն ինչ պետք է գնես, իսկ գումար չկա: Ես որոշեցի մայրիկիս հետ շուկայում ապրանք վաճառել: Դպրոցում վատ չեմ սովորել, հաշվարկներում ինձ օգնում է դպրոցիս սովորած գիտելիքները: Կցանկանայի դպրոց գնալ, բայց միջոցներ չկան... Հայրս ու մայրս ինձ փորձեցին համոզել, որ դպրոցս շարունակեն, բայց ես զգացի, որ շատ բաներով հետ մնում իմ ընկերներից, և ավելի լավ է, որ դպրոց չգնամ: Դպրոց էի գնում մաշված հագուստով, իսկ ընկերներս... Այս սեպտեմբերին մայրս ինձ համար համազգեստ էր գնել: Կոշիկ չկարողացանք գնել: Միտում են դպրոցը, տանը գիշերներն են կարդում, բայց մարդ գոնե պետք է օրվա հաց ունենա, որ դա իր կրթությանը չազդի», - պատմում է մեզ հետ զրույցում Տավուշի մարզի գյուղերից մեկում բնակվող 15-ամյա Գրոջ:

Փորձագետի կարծիք

Երբ երեխան բռնության է ենթարկվում...

«Չամայիս ամեն օր պապա խմած էր, մամայիս ծեծում էր, հենց փորձում էի պաշտպանել՝ ինձ էլ էր խփում»,- պատմում է Աննան, ով վերջերս էր չափահաս դարձել, բայց հիշում է՝ մանկության վաղ շրջանից իր ընտանիքում բռնությունն անպակաս է եղել: Թեև ինքն ու իրենից մի քանի տարով փոքր բույրը մոր պես աննկարագրելի բռնության են ենթարկվել ու հիմնականում դաժան ծեծի միայն ակամատեսն են եղել, բայց պատահում էր՝ հայրը նրանց էլ էր խփում, սպառնում էր՝ կսպանեն, կմորթեն՝ ծեններդ բարձրացնեք:

«Ակզբում, որ շատ փոքր էիք, հենց մամայիս տամում էր ուրիշ սեմյակ, դուռը փակում, իբր թե՝ որ մենք չտեսնենք՝ ոնց է մամային ծեծում, վախենում էիք միջամտել, որովհետև սպառնում էր՝ եթե միջամտեք կամ մեկին զանգեք, կսպանի մամային: Ակզբում մեջ չէի ընկնում, բայց մի քիչ որ մեծացա, էլ չէի դիմանում, խառնվում էի ու իրա դռի տակ ընկնում, անխնա խփում էր»,- պատմում է Աննան՝ հուզմունքից ձեռքեր բռնուցք արած:

Աննայի մայրը պատմում է՝ պատահել է, որ աղջիկները վախից ուշաթափվել են. «Ոչ ոք չուներ, որ օգնության դիմեիք, ոչ բարեկամ, ոչ հարազատ, ուստի կանոններն էլ քանի անգամ եկել է, բայց գործ չի հարուցել, իրան ա պաշտպանել: Մի անգամ պուճուրիս նենց ա խփել, երեխեն թռել էր, գլխով հարվածել պատին: Փառք Աստծո, լավ են սովորել, Աննա եղբայրից հետո դասարանի լավագույն աշակերտն էր»:

Հիմա Աննան, մայրն ու քույրը ավելի հանգիստ են, նրանց հաջողվել է «փախչել» հորից. Կանանց աջակցման կենտրոնը նրանց օգնում է: Կենտրոնի ծրագրերի ղեկավար **Յասմին Գևորգյան** ասում է, չնայած բացառություններ լինում են, սակայն, մեծ մասամբ այն ընտանիքներում, որտեղ բռնություն կա, երեխաների մոտ հոգեկան լուրջ խնդիրներ են լինում, կակազում են:

«Մենք դեպքեր ենք ունենում, երբ 6-17 տարեկան աղջիկների մոտ գիշերամիդոլոգիայում է լինում, ցածր հեմոգլոբին, թերանոցում, որը տանում է անոռեքսիայի»,- ասում է Գևորգյանը: Նա նկատում է, որ եթե երեխաները բռնության չեն ենթարկվում, միայն ակամատեսն են լինում, նրանք ևս բռնության գոհեր են. «Մեր երկրում ոչ միայն կանայք, այլև երեխաները պաշտպանված չեն, չի գործում խնամակալության և հոգաբարձության ինստիտուտը: Ամենակարևորը՝ երեխաների խնդիրը մի համակարգի վրա ենք դրել, որը նպատակին չի ծառայում, ընտանեկան, երեխաների բռնության դեպքերին հատուկ մոտեցում չի ցուցաբերում: Մենք դեպք ունենք, երբ հայրը հերիք չէ մորը ծեծում էր, երեխային ստիպում էր թքել ու խփել մորը, հետո երեխան վախեցած ու լացելով մորից ներողություն էր խնդրում: Վտանգավոր է նաև, երբ կինը բռնարար ամուսնուց բաժանվում է, բայց, ասենք՝ տղա երեխային խնամակալության խորհուրդը թողնում է հոր մոտ՝ պատճառաբանելով՝ երեխան է ուզել, հայրը տուն ունի: Հաշվի չեն առնում, որ այդ հայրը խնդ է, և հոր հոգաբարձությամբ



պետք է զբաղվի հիմնականում սոցիալական աշխատողը: «Այսօր երեխաների պաշտպանության առաջնային օղակները՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները, մեծ մասամբ չունեն մասնագիտական որակներ ու բավարար ռեսուրսներ, գործում են կամավորության հիմունքներով, մինչդեռ հենց նրանք պետք է բացահայտեն, աջակցեն նման դեպքերում: Այս առումով հարց է ծագում, թե ինչպես պետք է հայտնաբերվեն բռնության դեպքերը»,- ասում է նա:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով, որին Հայաստանը միացել է 1992-ին, պետությունը պարտավորվում է պաշտպանել երեխաներին ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգաբարձության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից:

էլ տղա երեխան կմեծանա ու հորը կնմանվի, կսովորի, որ, այո՛, «իսկական» տղամարդը պիտի կնոջը ծեծի»: Մի խոսքով, եզրափակում է Յասմին Գևորգյանը, Յայաստանում, ըստ էության, չկա մեխանիզմ, որը ընտանիքներում կպաշտպանի երեխաներին բռնությունից: «Ընտանիք և համայնք» ԳՀ մախագահ **Քնարիկ Գառանֆիլյանի** համոզմամբ՝ երեխաների նկատմամբ բռնության խնդրով

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի երեխաների պաշտպանության ծրագրի համակարգող **Յասմին Առաքելյանը** նույնպես նկատում է, որ մենք չունենք համապարփակ ազգային ռազմավարություն, որում մեխանիզմ կլինի երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերը բացահայտելու, կանխարգելելու և ուղղորդելու համար. «Քանի որ ընտանիքը փակ համակարգ է, բռնության դեպքերը մնում են չբացահայտված: Կան նախապայմաններ, որոնք թույլ են տալիս մասին» N51 արձանագրային որոշումը:

Իրավապահ մարմինների արձագանք



Այս տարվա ընթացքում 38 քրեական գործ է հարուցվել անչափահաս երեխաների նկատմամբ սեռական հանցագործությունների դեպքերով, որից 47 տոկոսը ընտանիքի ներսում կատարված սեռական հանցագործություններ են: Նման թվեր է ներկայացրել ԳՀ քննչական կոմիտեի մախագահի տեղակալ **Արթուր Ղանթարյանը**: Նա նշել է, որ ընտանեկան բռնությունների դեպքերով քրեական գործ կարելի է հարուցել միայն տուժողի կամ դիմողի բողոքի հիմքի վրա: Սակայն, ըստ նրա, հաճախ լինում են դեպքեր, երբ դիմելուց հետո բռնության գոհը հետ է վերցնում դիմումը, քանի որ հաշտվում է: Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության (ՔԳԳԿ) 3-րդ վարչության պետի տեղակալ **Արթուր**

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի երեխաների պաշտպանության ծրագրի համակարգող **Յասմին Առաքելյանը** նույնպես նկատում է, որ մենք չունենք համապարփակ ազգային ռազմավարություն, որում մեխանիզմ կլինի երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերը բացահայտելու, կանխարգելելու և ուղղորդելու համար. «Քանի որ ընտանիքը փակ համակարգ է, բռնության դեպքերը մնում են չբացահայտված: Կան նախապայմաններ, որոնք թույլ են տալիս մասին» N51 արձանագրային որոշումը:

նշանակում է՝ նա ենթարկվում է հոգեբանական բռնության: «Եթե երեխայի նկատմամբ է բռնություն գործադրվել, ապա շատ արագ արձագանքում ենք: Անհրաժեշտության դեպքում տեղափոխում ենք երեխաների աջակցության կենտրոն, որտեղ բոլոր պայմանները ստեղծված են, որպեսզի երեխայի հետ կարողանա աշխատել բազմամասնագիտական խորհուրդը՝ հոգեբան, մանկավարժ և այլն: Այստեղ երեխան կարող է տևական ժամանակ մնալ»,- ասաց նա: Դուրյանի խոսքով, բռնության ենթարկված կանայք հիմնականում երեխաների հետ են լքում տունը: «Մենք ունենք նաև վերականգնողական համայնքային կենտրոններ, անհրաժեշտության դեպքում նրանց տեղափոխում ենք այնտեղ»,- ասաց ոստիկանության ներկայացուցիչը, ավելացնելով, պետք է հասնել այն բանին, որ թեկուզ մեկ երեխայի համոզեց էլ բռնությունը բացառվի:

Իրավապահ մարմիններ

«Եթե տեսնում ես՝ երեխան կապտուկներով է եկել դպրոց, պարտավոր ես ահազանգել»

«Ձրկանքներով, անտեսված պայմաններում մեծացած երեխաները հետագայում չեն կարողանալու ստանալ իրենց ներուժը զարգացնելու համար լիարժեք պայմաններ: Սրա համար է, որ մենք ահազանգում ենք: Երեխաների նկատմամբ բռնությունը կա, չի նվազում, ցավոք սրտի, աղքատության խորացման պայմաններում նորանոր դրսևորումներ է ձեռք բերում»,- այսպիսի կարծիք է հայտնել լրագրողների հետ հանդիպմանը Երեխաների պաշտպանության ցանցի նախագահ, ԳՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի նախագահ Միրա Անտոնյանը:

Նրա խոսքով՝ Յայաստանում բացի երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգի հաստատումից ուրիշ այլ առաջընթաց չենք կարողանում գրանցել, չկան հայեցակարգից բխող ընթացակարգեր, թե ով ինչ պետք է անի, սկսած մանկապարտեզի դաստիարակից ներառյալ բոլոր այն մարդիկ, ովքեր առնչվում են երեխաների հետ: «Հիմա ամեն ինչ թողնված է բարի կամքի վրա: Որևէ մեկի աշխատանքի նկարագրում չկա մի կետ, որ եթե տեսնում ես՝ երեխան կապտուկներով է եկել դպրոց, անխնայ է, սեզոնի անհամապատասխան հագուստով է, ապա ինքը պարտավոր է ահազանգել»,- ասում է Անտոնյանը:

«Երեխեքին նայելուց սիրտս ծնվում է...»



11 տարեկան Անիի նկարած ընտանիքում հայրը սատանայի ականջեր ունի, մայրիկի նկարի ներքում գրված է՝ «մամա ջան»: Երեխաների ծեռքով արված այս նկարները մեզ տրամադրեցին Կանանց իրավունքների կենտրոնի մասնագետները, երբ հետաքրքրվում էինք բռնության ենթարկված կանանց երեխաներով: «Բռնությունից երեխան կրկնակի է տուժում՝ համ բռնության է ենթարկվում, համ վկա է: Երեխեքին որ մայրն էմ, սիրտս ծնվում է, որպես մայր ու տատիկ եմ մայրում»,- ասում է կենտրոնի տնօրեն Սուսաննա Վարդանյանը:

Օմբուդսմենի տարեկան զեկույցից

Երեխաների նկատմամբ բռնության դեպքեր գրանցվել են նաև խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ինչպես նաև հատուկ հանրակրթական դպրոցներում իրականացված մշտադիտարկումների ընթացքում՝ ասված է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում: Մասնավորապես, արձանագրվել են առանձին գիշերօթիկ հաստատություններում որոշ դասակարգի կողմից կոպիտ վերաբերմունքի, այդ թվում՝ ծեծի, բռնության, հիգիենիկ պարագաներ չտրամադրելու, գողության դեպքեր: Այսպես, փորձագետներն արձանագրել են, թե ինչպես է դասապատրաստման սենյակներին մեկուսիստիարակն ապակե երեխաներից մեկին... Մեկ այլ դեպքով երեխաները հայտնել են, որ դասակներն իրենց հայրից են, անպարկեշտ բառերով դիմում, փայտով ու մանրահատակի կտորներով ծեծում ու հարվածում իրենց գլխին: Մի այլ դասակ, որպես պատժի միջոց, գիշերը խոսելու համար երեքն մերկ կանգնեցնում է միջանցքում կան չքնելու համար երեխաներին վախեցնում է, որ կտանի, զուգարանում կպահի ամբողջ գիշեր, երեքն արգելում է 21:00-ից հետո զուգարան գնալ, երեխաներն էլ ստիպված զսպում են իրենց կամ գաղտնի գնում զուգարան:

Մուրացիկ երեխաները



Բռնության նկատմամբ առավել խոցելի են նաև մուրացիկ երեխաները, նշվում է ՄԻՊ-ի վերջին զեկույցում: Մուրացիկությունը դրսևորվում է երկու ձևով. մի դեպքում սոցիալապես անապահով ընտանիքները երեխաներին դրոմ են մուրացկանության՝ նրանց միջոցով փորձելով գումար վաստակել, մեկ այլ դեպքում, եթե երեխան մանկահասակ է և ի վիճակի չէ ինքնուրույն գործելու, նրան օգտագործում են որպես միջոց՝ անձանց մոտ խղճահարություն առաջացնելու և գումար ստանալու համար:

Չայն բազմաց

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2014 թվականին իրականացված «Երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ» հետազոտության համաձայն՝ ընդհանուր առմամբ երեխաների 27%-ը շրջապատի կողմից ենթարկվում է բռնության, որից 68%-ը՝ ֆիզիկական բռնությամբ, 48%-ը՝ հոգեբանական: Երեխաներն ընտանիքից դուրս շրջապատում բռնության են ենթարկվել հիմնականում հասակակիցների կողմից (82%), ուսուցիչների կողմից (17%), դասակների ու դաստիարակների կողմից (15%):

Activate Talks

«Գիտելիք հանուն կյանքի»



Եթե երկու տարի առաջ ինչ-որ մեկն ինձ ասեր, որ մեկնելու են Մոսկվա տատիկի տեսնելու՝ մեն-մենակ, ոչ մեկը չէր հավատա: Բայց շնորհիվ իմ մայրիկի մեկնեցի, ուզում էի փորձել իմ կարողությունները, ինքնուրույն քայլեր անել, որոշում կայացնել, պատմում է 17-ամյա Սյուզաննա Ալեքսանյանը, ով տեսողության խնդիր ունի: Նա սիրում է կիթառ, դաշնամուր նվագել, երգել: Ասում է, երբ որոշեցի, որ պետք է դաշնամուր նվագել սովորեմ, գնացիմ դպրոց, տնօրենը ծանոթացրեց ինձ ուսուցչուհու հետ: «Ես երբեք չեմ մոռանա նրա շփոթությունը. մեր հանդիպումը երկի նրա համար արտակարգ իրավիճակ էր: Բայց տարեվերջին ես լավ ելույթ ունեցա», - իր փորձի, փորձիկ հաջողությունների մասին Սյուզաննան և մի շարք այլ բանախոսներ պատմեցին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Activate Talks միջոցառման ընթացքում, որն այս տարի անցկացվում էր «Գիտելիք հանուն կյանքի» կարգախոսի ներքո և նվիրված էր դպրոցների անվտանգության թեմային:

րառում է նաև ծնողների հետ աշխատանքը, երեխաների մոտ անվտանգ վարվելակերպի կանոնների ուսուցման և հմտությունների ձևավորման հարցում ծնողների ու մանկավարժների համագործակցությունը: Դա նաև անվտանգության բնագավառում ծնողների գիտելիքները ակտիվացնելու և ընդլայնելու միջոց է:

Տիգրան Թովմասյանն անդրադարձավ նաև աղետների դիմակայման գործում կանանց պատրաստվածությանը, նշելով, որ հայ հասարակությունում ընդունված է, որ աղետների ժամանակ կնոջը ներկայացնեն զոհի, տուժածի կարգավիճակով: Որպես հետևանք՝ կանայք աղետների, դժվարությունների դեպքում օգնության, իրենց փրկելու ակնկալիքով սպասում են տղամարդկանց: Մինչդեռ այլ երկրներում կանայք արդեն ակտիվորեն ներգրավված են աղետների ռիսկի նվազեցման ու կառավարման համակարգում:

«Շատ կարևոր է, որ կանայք արտակարգ իրավիճակներում կարողանան ճիշտ որոշումներ կայացնել գործելու համար: Մեզ մոտ այնպիսի

մտածողություն է արմատավորված, որ տղամարդը կգա սպիտակ ծիվով ու իրենց կփրկի: Ու սպասում են: Սա շատ վտանգավոր է հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ տղամարդկանց մեծ մասը դրսում է, արտագնա աշխատանքի: Մենք ուզում ենք՝ սպասելու փոխարեն կանայք շատ արագ կողմնորոշվեն ու գործեն», - ասում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչը, հիշեցնելով, որ լավագույն արդյունք լինում է այն դեպքում, երբ մինչև փրկարարների տեղ հասնելը մարդն ինքն է քայլեր ձեռնարկում:

Նշենք, որ Activate Talks միջոցառման ձևաչափը մշակվել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից 2014-ին՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 25-ամյակի առթիվ և նպատակ ունի, որ կառավարության, քաղաքացիական հասարակության, բիզնեսի, կրթական համակարգի և այլ կառույցների ներկայացուցիչները երեխաների հետ միասին քննարկեն ու լուծումներ տան այն խնդիրներին, որոնց բախվում են ամենախոցելի իրավիճակում հայտնված երեխաները:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի գնահատմամբ՝ տարեկան 50-60%-ը երեխաներ են: Աղքատ երկրներում երեխաները ավելի շատ են տուժած աղետների հետևանքներից: Կլիմայի փոփոխությանը վերագրվող մահերի ավելի քան 99%-ը տեղի է ունենում գարգացող երկրներում, և երեխաները կազմում են մահացածների ավելի քան 80%-ը:

Մասնահավեր

«Պատերազմը միակ բանն է, որ նրանք տեսել են իրենց կյանքում»



Մոտ 14 միլիոն երեխա արդեն իսկ տուժել է Սիրիայում և Իրաքում տեղի ունեցած հակամարտությունների հետևանքով: Այս մասին է ահազանգում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը: «Փոքր երեխաների համար պատերազմը միակ բանն է, որ նրանք տեսել են իրենց կյանքում: Այդ երեխաներին և դեռահասներին սպառնում է բռնության մեջ մեծանալու և իրենց վերապրած սարսափն ու խոշտանգումները հաջորդ սերնդում վերարտադրելու վտանգը», - նշել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Էնթոնի Լեյքը: ՄԱԿ-ի փորձագետների հաղորդմամբ՝ «Իսլամական պետություն» ծայրահեղական խմբավորման վերահսկողության տակ գտնվող տարածաշրջաններում մինչև 12 տարեկան երեխաներին ստիպում են բանակային վերապատրաստում անցնել, ինչպես նաև կատարել ահաբեկչական գործողությունների և սպանությունների իրականացման առաջադրանքներ:

«Փոքրիկ ձեռքերի ծանր բեռը»

Սիրիացի երեխաները շատ բան են վճարում չդադարող պատերազմի և այն բանի համար, որ աշխարհին չի հաջողվում վերջ տալ հակամարտությանը, - նշվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Սեյվ դը չիլդրեն» կողմից հուլիսին պատրաստված «Փոքր ձեռքերի ծանր բեռը» զեկույցում: Ձեկույցի ուսումնասիրության հիմնական թեման հակամարտության պայմաններում երեխաների աշխատանքի շահագործումն է, ինչի հետևանքով նրանք կորցնում են կրթություն ստանալու իրավունքը, վնասում իրենց առողջությունը և զրկվում ավելի լավ կյանքի հեռանկարից:

«Չաճախ Սիրիայում երեխաները ապահովում են ընտանիքի եկամտի 75%-ը, իսկ Չորդանում գրեթե կեսը մասնակցում է իրենց ընտանիքի կենսամակարդակի ապահովմանը: Լիբանանի որոշ տարածաշրջաններում երեխաները ներգրավվում են աշխատանքի մեջ մինչև 6 տարեկանը», - նշվում է զեկույցում:

«Միայն վրոդվելը բավարար չէ»

Եվրոպայի ափ հասած փախստական և միգրանտ երեխաների լուսանկարները խորապես մտահոգիչ են: Դիակներ ծովի ափին: Երեխաներից ոմանք սահման հասած բեռնատարների հետևում շնչահեղձ վիճակում, ոմանք՝ փշոտ մետաղալարով ցանկապատների արանքում հուսահատ ծնողների հետ... Փախստական երեխաների նկարները շատերին են վրոդվեցրել, սակայն միայն վրոդվելը բավարար չէ: Վրոդվումը պետք է հաջորդեն համապատասխան քայլեր: Այս երեխաների իրավիճակը նրանց ընտրությանը չէ կամ նրանց վերահսկողությանը մերժել: Նրանք պաշտպանության կարիք ունեն, ինչպես նաև իրավունք, ասված է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայտարարության մեջ:



Հայրեր և դուստրեր

Շարադրություններ՝ մեկը մյուսից հուզիչ ու զգացմունքային

Ամփոփվեցին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և «Սեդիսմաքս» ընկերության համատեղ հայտարարված «Իմ աղջիկը» հարյուրների շարադրությունների մրցույթի արդյունքները:

Առաջին երեք մրցանակակիրները՝ Աշոտ Բաղայանը, Կարեն Կարապետյանը, Դավիթ Կարապետյանը, ներկայացել էին մրցանակաբաշխությանը ընտանյոք համերգով՝ իրենց փոքրիկ արքայադուստրերի հետ միասին: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Չայրապետյանը իր խոսքում նշեց, որ երբ հայտարարում էին մրցույթը, չէին սպասում, որ դա այսպիսի լայն արձագանք կստանա, քանի որ հասկանում էին՝ շարադրությունները պետք է գրեն հայրերը, իսկ նրանք միշտ չէ, որ հավակն են իրենց զգացմունքները արտահայտելու, առավել ևս՝ գրելու դրա մասին: Սակայն այդ մտավախությունը փարատվեց, երբ ստացան 122 շարադրություն՝ մեկը մյուսից հուզիչ ու զգացմունքային: «Շարադրություններ կային, որ, պետք է խոստովանեմ, կարդալով, այդ սիրո, ջերմության հոր-ձանքի մեջ հայտնվելով, արցունքներս հազիվ եմ զսպել: Ես հպարտ եմ մեր հայրերով, ովքեր ունեն այդ աղջիկները, ովքեր իրենց սերն ու



գանկությունները, զգացմունքներն արտահայտեցին այդքան մեծ ոգևորությամբ: Դանդաղեց, որ նրանց աղջիկները, մեծանալով այդ սիրո և հարգանքի մեջ, մեծ օգուտ են բերելու մեր հասարակությանը», - նշեց Գարիկ Չայրապետյանը: «Սեդիսմաքսի» տնօրեն Արա Թադևոսյանն էլ ասաց, որ մրցույթը, իսկապես, հայտնություն է դարձել: «Ինձ համար այս մրցույթի ամենակարևոր բանն այն է, որ շատ մարդիկ այդ շարադրությունները գրելու միջոցով վերահիմաստավորեցին իրենց սերը երեխաների հանդեպ», - նշեց նա: «...Ես գիտեմ, թե ո՞րն է նրա սիրած գույնը, գիտեմ՝ ինչ պաղպաղակ է սիրում, գիտեմ, թե ո՞նց է լացում, ու սիրում եմ այն ծիծաղը, որ հենց նրանն է ու ինձ այնքան ծանոթ: Սիրում եմ նրա գանգուրներն ու նրա՝ ինձ գրկելու ձևը: Գիտեմ, որ քնելուց առաջ պիտի աչուկները համբուրեմ ու ասեմ, որ երգում թիթեռներ տեսնի... Գիտեմ նաև, որ նրա համար կարևոր է, որ թիթեռներն այդ վարդագույն լինեն: Դա, մա վարդագույնն է սիրում... Ես սիրում եմ Մայային: Սիրում եմ նրա ծայրն ու նրա անունը: Մայան իմ աղջիկն է: Ամենակարևորը, որ նա իրական է՝ շունչս կտրվելու չափ իրական: Այսօր քոլեջում ուսուցչուհին ասաց, որ տղաներին

Համարի վրա աշխատել են՝ Լիլիթ Քոչինյանը, Լիա Խոջոյանը, Նելլի Բաբայանը, Արման Դարիբյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Հասմիկ Հակոբյանը, Մարիաննա Դահրամանյանը

իրեն ու չի խաղացել նրանց հետ միայն նրա համար, որ տղա են: Զայրացա, հարցական հայացք ուղղում են նրան: Նայում է ուշադիր ու հարցնում. - Դու էլ ես տղա չե՞, պապա: - Դե, հա՛, - կիսատխուր պատասխանում եմ՝ կանխազգալով երկրորդ նախադասության բովանդակությունը: Սպասում եմ: - Դու տղա ես, բաց մեկ է՝ ես քեզ սիրում եմ, դու լավ տղա եմ: Ես լավ տղա եմ: Սիրոս տեղն է ընկնում: Դե, գնանք տունը: Աշոտ Բաղայան, առաջին մրցանակ

UNICEF logo and contact information: Մույն թողարկումը լույս է տեսել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չեն, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: Գլխավոր խմբագիր՝ Թամարա Գրիգորյան Էլ. հասցե՝ womennetam@gmail.com